ՀՏԴ 94 (479.243)
Պատմություն

Տարոն ՀԱԿՈԲՅԱՆ
պ.գ.թ., ԱրՊՀ
e-mail: taronh@rambler.ru

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ և ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ:
(1992թ. ՀՈՒՆՎԱՐ – 1994թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ)

ԼՂՀ-ի հռչակումից հետո սկսվեց նոր իշխանական կառույցների ձևավորման գործընթացը: Այդ կառույցների ստեղծումը, չնայած ռազմաքաղաքական դժվարին կացությանը, անցավ միջազգային ժողովրդավարական չափանիշներին լիովին համապատասխան: Արցախում պետական շինարարության առանձնահատկությունն այն է, որ նույնիսկ նկատվող ներքաղաքական բարդ իրադրության և սաստակացող ռազմական գործողությունների պայմաններում իշխանության գլուխ անցած նոր ուժերը, անկախ կուսակցական պատկանելությունից, փորձեցին ինքնուրույնաբար ստեղծել հիմքերը իրավական և ժողովրդավարական մի պետության, որին վիճակված էր դիմակայել Ադրբեջանի ագրեսիային և պահպանել իր անկախությունը: Սակայն այդ փորձերը բախվեցին ՀՀ իշխանությունների կողմից ներքաղաքական նկատառումներով հարուցված անհաղթահարելի խոչընդոտներին:

ՀՀ նախագահը սաստկացրեց ճնշումը ԼՂՀ օրենսդիր մարմնի վրա և կարողացավ իշխանափոխություն կատարել ԼՂՀ-ում՝ բերելով իր համար բարենպաստ ուժեր: Այնուհետև ԼՂՀ կառավարման համակարգում կատարվեցին ստիպողական փոփոխություններ, որոնց արդյունքում երկիրը խորհրդարանական հանրապետությունից անցում կատարեց նախագահականի:

Բանալի բառեր՝ *Պետական շինարարություն, Գերագույն խորհուրդ, Նախարարների խորհուրդ, Պաշտպանության կոմիտե, Պաշտպանության խորհուրդ, Պաշտպանության պետական կոմիտե, բանակցային գործընթաց, ներքաղաքական հակասություններ, կառավարություն, հակամարտություն*

Т. Акопян

ВНУТРИПОЛИТИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКЕ И ИХ ВЛИЯНИЕ НА ФОРМИРОВАНИЕ ГОСУДАРСТВЕННОЙ СИСТЕМЫ (ЯНВАРЬ 1992 - ДЕКАБРЬ 1994 ГГ.)

После провозглашения НКР начался процесс формирования новых властных структур. Несмотря на сложную военно-политическую ситуацию, формирование этих структур прошло в полном соответствии с международными демократическими нормами. Особенность государственного строительства в Арцахе заключается в том, что даже в условиях явной сложной внутриполитической ситуации пришедшие к власти новые силы, независимо от партийной принадлежности, постарались самостоятельно создать основы правового и демократического государства, которому было суждено противостоять агрессии Азербайджана и сохранить свою независимость. Однако эти усилия столкнулись с непреодолимыми препятствиями, созданными властями РА во внутриполитических целях.

Президент РА усилил давление на законодательный орган НКР и смог реализовать смену руководства в НКР, тем самым приведя к власти благоприятные для них силы. В последствие в системе руководства НКР произошли принудительные изменения, в результате которых страна из парламентской республики перешла в президентскую.

Ключевые слова: *государственное строительство, Верховный совет, Совет министров, Комитет обороны, Государственный комитет обороны, переговорный процесс, внутриполитические противоречия, правительство, конфликт*

T. Hakobyan

THE INNER POLITICAL PROCESSES IN THE NAGORNO KARABAKH REPUBLIC AND THEIR INFLUENCE ON THE FORMATION OF THE STATE SYSTEM (JANUARY 1992 – DECEMBER 1994)

After the proclamation of the NKR, the process of new ruling structures formation started. Despite the complicated military-political situation, the formation of these structures passed according to international democratic norms. The peculiarity of state building in Artsakh is in the fact that even in the conditions of vivid complicated inner political situation the new forces, no matter to which political party they belonged, tried to create the basis of a legal and democratic state which would have to stand the aggression of Azerbaijan and keep its independence. But these efforts faced insuperable obstacles created by the authorities of the Republic of Armenia for inner political reasons.

The president of the RA intensified the pressure on the NKR legislative body and managed to realize a change of power and thus administer the power to the forces favorable for him. Later forced changes took place in the system of the NKR leadership and as a result the state from the parliamentary republic turned into a presidential one.

Key words: *state building, Supreme Council, Council of Ministers, Defense Committee, State Committee of Defense, negotiation process, inner political contradictions, government, conflict*

Մինչև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ) հռչակումը և Գերագույն խորհուրդի (ԳԽ) ընտրությունները Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում (ԼՂԻՄ) պահպանվում ու գործում էին խորհրդային իշխանության բոլոր մակարդակների մարմինները: Սակայն, նրանց գործունեությունը թեև հիմնված էր ԽՍՀՄ օրենքների վրա, այնուամենայնիվ, ամբողջովին ենթարկեցված էր Ադրբեջանի կազմից դուրս գալու և ինքնուրույն պետականություն ստեղծելու նպատակները հետապնդող համաժողովրդական շարժման խնդիրներին: Դրանք, հատկապես Շարժման առջև կանգնած քաղաքական ու դիվանագիտական բնույթի հարցերի լուծման գործում ժողպատգամավորների մարզային խորհուրդն ու նրա գործկոմը, ոչ միայն ցուցաբերում էին մեծ ակտիվություն, այլև դարձել էին բոլոր գործողությունների օրինական, իրավական հիմքերի մշակման կենտրոն: Սակայն մարզում ստեղծված իրադրությամբ և նրա զարգացման ընթացքով թելադրված հիմնախնդիրները լուծելու գործում մարզգործկոմի ղեկավարության կողմից ցուցաբերվող նկատելի երկչոտությունը պահանջում էր ամրապնդել մարզի ղեկավարությունը: Հենց այդ նպատակն էր հետապնդում մարզային խորհրդի գործկոմի 1991թ. հունիսի 11-ի ընդլայնված նիստը, որին մասնակցում էին ձեռնարկությունների և կազմակերպությունների ղեկավարները, ԼՂԻՄ շրջգործկոմների նախագահները: Քննարկելով մարզում ստեղծված աղետալի վիճակը՝ ակտիվը որոշեց ձեռնարկել կազմակերպչական անհետաձգելի միջոցներ՝ ընդունելով մարզգործկոմի նախագահ Ս. Բաբայանի հրաժարականը: Նախագահի պարտականությունների կատարումը դրվեց նրա առաջին տեղակալ Լ. Պետրոսյանի վրա[1]:

ԼՂՀ-ի հռչակման մասին 1991թ. սեպտեմբերի 2-ին ընդունված Հռչակագրում ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհուրդն ու նրա գործկոմը ճանաչվեցին որպես ԼՂՀ պետական իշխանության և կառավարման ժամանակավոր բարձրագույն մարմին՝ մինչև համաժողովրդական ընտրությունների անցկացումը, իշխանության ու կառավարման հանրապետական մարմինների ձևավորումը[2]:

ԼՂՀ-ի հռչակումից հետո սկսվեց նոր իշխանական կառույցների, առաջին հերթին՝ օրենսդիր մարմնի՝ ԳԽ-ի ձևավորման գործընթացը: Պետական և ռազմական շինարարության խնդիրները լուծվում էին զուգահեռաբար՝ չընդհատվող ռազմական գործողությունների պայմաններում: ԼՂՀ առաջին գումարման ԳԽ-ում, որը հետագայում անվանվեց ԼՂՀ խորհրդարան (այժմ՝ ԼՂՀ Ազգային ժողով), պետք է ընտրվեր 81 պատգամավոր: Ընտրությունների օր նշանակվեց 1991թ. դեկտեմբերի 28-ը: Ընտրությունների անցկացման կարգը քննարկվեց ԼՂՀ գործկոմի դեկտեմբերի 19-ի նիստում[3]: Կազմավորվեց

---

[1] *Տե՛ս* ***Арутюнян В.****, События в Нагорном Карабахе, хроника часть IV, январь 1993г.-июль, Ер., 1997, с. 26 (այսուհետև՝Հարությունյան Վ.):*

[2] *Նույն տեղում, էջ 73:*

[3] *Տե՛ս* ***Աբրահամյան Հ.****, Ճակատագրին ընդառաջ, Եր., 2001, էջ 147:*

81 ընտրատարածք[1], այդ թվում նաև բոլոր ադրբեջանաբնակ վայրերում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ հաստատվեց Է. Պետրոսյանը:

Դեկտեմբերի 28-ին կայացան ԼՂՀ ԳԽ ընտրությունները, որոնք անցկացվեցին մեծամասնական ընտրակարգով՝ ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ:

Հանրապետության ԳԽ ընտրությունների մասին տեղյակ էին պահվել Շուշիի և ադրբեջանական մյուս բնակավայրերի բնակիչները: Ադրբեջանցիները կատարեցին Մութալիբովի հրամանը և չմասնակցեցին ընտրություններին, ինչպես որ չէին մասնակցել հանրաքվեին:

ԼՂՀ ԳԽ ընտրություններից հետո՝ 1992 թ. հունվարի 6-ին, Ստեփանակերտում՝ նախկին մարզխորհրդի նիստերի դահլիճում, ընտրված 51 պատգամավորներից 48-ի մասնակցությամբ (ճանապարհները փակ լինելու պատճառով 3 պատգամավորներ չէին կարողացել հասնել Ստեփանակերտ) և 80 դիտորդների ու լրագրողների ներկայությամբ, «Հայր մեր» տերունական աղոթքով աշխատանքն սկսեց ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանը: Նույն օրը ընդունվեց «ԼՂՀ պետական անկախության հռչակագիրը»[2]:

Հանրապետության սահմանները պաշտպանելու և բնակչության անվտանգությունն ապահովելու համար հենց առաջին նիստում որոշվեց ստեղծել հանրապետության իշխանության բարձրագույն մարմիններին ենթակա սեփական ռազմական ուժեր, հասարակական կարգի պահպանության ու պետական անվտանգության մարմիններ և բոլոր ռազմական ուժերը միավորել մեկ հրամանատարության ներքո:

Հունվարի 7-ի նիստում պատգամավորները ձեռնամուխ եղան ԳԽ նախագահի ընտրության հարցի լուծմանը: Առաջադրվեցին 7 թեկնածուներ՝ Լ. Պետրոսյան, Օ. Եսայան, Ռ. Քոչարյան, Ա. Մկրտչյան, Լ. Մելիք-Շահնազարյան, Ա. Մանուչարով և Շ. Մեղրյան: Թեկնածուներից հինգը ինքնաբացարկ հայտարարեցին, և մնացին Ա. Մկրտչյանն ու Լ. Պետրոսյանը: Մի քանի անգամ քվեարկություն կատարվելուց հետո 42 ձայնով ԼՂՀ ԳԽ առաջին նախագահ ընտրվեց ՀՅԴ անդամ, պատմական գիտությունների թեկնածու, 33-ամյա Ա. Մկրտչյանը[3]: Ստեղծվեց նաև Նախարարների խորհուրդ (ՆԽ), որի նախագահ հաստատվեց Օ. Եսայանը, իսկ տեղակալ՝ Բ. Առուշանյանը[4]: Ընտրված պատգամավորների մեծամասնությունը ՀՅԴ անդամներ էին, ԳԽ նախագահի ընտրություններում հաղթանակ տանելով՝ ՀՅԴ-ն որոշում ընդունեց երկրում ներքաղաքական կայունությունը

---

[1] *Տե՛ս* ***Օհանջանյան Մ.****, Անկախության քայլերը. ԼՂՀ-ում անցկացված հանրաքվեն և ընտրությունները (1991-1998թթ.), Ստեփ., 1998, էջ 12:*

[2] *Տե՛ս* ***Հարությունյան Վ.,*** *նշվ. աշխ., էջ 109:*

[3] *Տե՛ս* ***Աբրահամյան Հ.,*** *նշվ. աշխ., էջ 151-152:*

[4] *Տե՛ս* ***Հակոբյան Տ.****, ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994թթ.), Եր., 2011, էջ 37:*

պահպանելու նպատակով մի շարք կարևոր ղեկավար պաշտոններ, այդ թվում ՆԽ նախագահինը, հանձնել մյուս քաղաքական ուժերին: ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանի առաջարկով ԼՂՀ ԳԽ նախագահի առաջին տեղակալի պաշտոնի համար առաջադրվեց Ռ. Քոչարյանի թեկնածությունը, սակայն փակ գաղտնի քվեարկության ժամանակ թեկնածուն անհրաժեշտ քվեներ չստացավ: Նախագահի առաջին տեղակալի պաշտոնը մնաց թափուր:

ԼՂՀ ԳԽ առաջին նստաշրջանը կոչով դիմեց ՄԱԿ-ին, աշխարհի բոլոր պետություններին, ԱՊՀ երկրներին՝ խնդրելով ճանաչել ԼՂՀ-ն, նրան օգնություն ցույց տալ և կանխել արցախահայության ցեղասպանությունը:

Նստաշրջանի աշխատանքում հայտարարվեց ընդմիջում, և աշխատանքները շարունակվեցին հունվարի 17-20-ը:

Հունվարի 11-ին տեղի ունեցան ԼՂՀ ԳԽ պատգամավորների լրացուցիչ ընտրություններ. 11 թափուր տեղի համար ընտրվեց 9 պատգամավոր, որոնց իրավունքները հաստատվեցին ԳԽ նստաշրջանի հունվարի 17-ի նիստում: Նույն օրը ԼՂՀ ԳԽ նախագահի տեղակալ ընտրվեց ՀՅԴ անդամ Գ. Պետրոսյանը, քարտուղար՝ պատմական գիտությունների թեկնածու, անկուսակցական Վ. Հակոբյանը[1]:

ԳԽ նստաշրջանն ընդունեց «Արտակարգ դրության մասին» օրենքը: Ապա կազմավորվեցին ԳԽ մշտական հանձնաժողովները[2] և հետևյալ խումբ-խմբակցությունները՝ ՀՅԴ խմբակցություն, «Արցախի ժողովրդական ճակատ» պատգամավորական խումբ, «Մարտակերտցիների խումբ», «Միացում» պատգամավորական խումբ, չեզոք անդամներ ու զինվորականներ:

Այսպիսով՝ արցախահայության ազատագրական պայքարը թևակոխեց նոր շրջան՝ անկախ հանրապետության գոյության շրջանը: Ինչպես ցույց է տալիս պատմությունը, Արցախյան շարժումը սկզբնավորվեց համաժողովրդական զարթոնքի հորձանուտում: Հետագայում Շարժման մեջ ձևավորվեց երկու հակառակ ուղղություն: Մի ուղղությունը Ադրբեջանի ագրեսիային պատասխանում էր խաղաղարար երկխոսության քաղաքականությամբ, ինչը հետագայում չարդարացվեց, իսկ դրան զուգահեռաբար գնում էր այլ գործընթաց՝ ինքնապաշտպանության ջոկատների կազմավորումը, պարտիզանական շարժումը բռնազավթված գյուղերում: Եվ այդ խնդրում վճռական դեր խաղաց Արախում ՀՅԴ: ՀՅԴ-ի ակտիվությունը, ըստ երևույթին, գործի մղեց նաև ՀՀՇ-ին, որի խողովակով նույնպես սկսվեց զենք մատակարարվել և ստեղծվել ինքնապաշտպանական ջոկատներ: Սա չէր կարող Ղարաբաղյան շարժման առաջնորդների խմբավորում չառաջացնել. հայտնվեցին Լ. Տեր-Պետրոսյանի կողմնակիցներ, բայց հիմնական մասը ընդգրկվեց ՀՅԴ-ի մեջ:

Այս քաղաքական կուսակցության հաղթանակը ակնհայտորեն դուր չեկավ պաշտոնական Երևանին, որի գլուխ էր կագնած ՀՀՇ-ն: Եվ դա քաղաքական

---

[1] *Տե՛ս **Աբրահամյան Հ.**, նշվ. աշխ., էջ 152:*
[2] *Տե՛ս **Հակոբյան Տ.**, նշվ. աշխ., էջ 39:*

ցնցում հանդիսացավ Հայաստանի նոր իշխանության համար, որը տակավին չէր հասցրել հասկանալ, թե ինչ է կատարվում Արցախում: Որոշ առումով նուրբ իրավիճակ ստեղծվեց: Այսպես՝ ԼՂՀ ԳԽ նստաշրջանն սկսելուց մի քանի օր առաջ՝ հունվարի 3-ին, Ստեփանակերտ էր ուղարկվել Հայաստանի Հանրապետության ՀՀ ԳԽ-ի դիմումը: Այդ փաստաթղթում նշված էր, որ արցախահայության ազգային ազատագրական պայքարը թևակոխել է նոր՝ պետականության հաստատման շրջան: ՀՀ ԳԽ-ն համոզված էր, որ այն կընթանա միջազգային իրավունքի հանրաճանաչ ժողովրդավարական նորմերին համապատասխան՝ դրանով օրինական հիմքի վրա դնելով ԼՂՀ քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը: Այնուհետև ասված է, թե ՀՀ ԳԽ-ն ողջ հայ ժողովրդի անունից հավաստիացնում է ԼՂՀ ԳԽ-ին, որ բոլոր միջոցներով զորավիգ կլինի Արցախի պետականության հաստատմանն ու ամրապնդմանը: Սակայն մի քանի օր անց պարզվեց, որ վերոհիշյալ դիմումը պարզապես քաղաքական դեմարշ էր. ՀՀ-ի ՀՀԾ-ական իշխանությունները չէին սպասում դեպքերի նման ընթացքի, և հունվարի 12-ին, երբ ՀՀ ԳԽ նախագահության նիստի ժամանակ առաջարկվեց շնորհավորանքի խոսք հղել ԼՂՀ նորընտիր իշխանություններին, նախագահության 12 անդամներից Է. Եգորյանը և Ա. Ոսկանյանը դեմ քվեարկեցին՝ շատ լավ իմանալով, որ որոշում ընդունելու համար անհրաժեշտ է 11 ձայն: Այսպիսով, ՀՀ ԳԽ-ն չշնորհավորեց ԼՂՀ նորընտիր իշխանություններին[1]: Պատճառը պարզ է. Արցախում իշխանության էին եկել ՀՀ-ի ՀՀԾ-ական ղեկավարության համար ոչ ցանկալի ուժեր: Փաստորեն, պաշտոնական Երևանը ԼՂՀ-ի համար այդ դժվարին պայմաններում բացահայտ քաղաքական առճակատման գնաց Ստեփանակերտի հետ: Դրա արտահայտությունը դարձան ԼՂՀ իշխանությունների նկատմամբ ՀՀ ղեկավարության հետագա վերաբերմունքն ու ձեռնարկած քայլերը:

ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանը հունվարի 26-ից փետրվարի 2-ը կատարեց առաջին պաշտոնական այցը Երևան: Պաշտոնական տեղեկագրերում մանրամասություններ չեն պահպանվել նաև այդ այցի վերաբերյալ: Սակայն գոյություն ունեն տեսակետներ այն մասին, թե ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը Ա. Մկրտչյանին ընդունել է խիստ սառը և պահանջել հրաժարական տալ[2]:

Իսկ ռազմական իրադրությունը ԼՂՀ-ում շարունակում էր շիկանալ: Օրեցօր սաստկացող մարտական գործողությունները հրամայաբար պահանջում էին կատարելագործել ոչ միայն ինքնապաշտպանական ուժերի (ԻՊՈՒ) կառուցվածքային ու մարտական բնութագրերը, այլ նաև կառավարման համակարգը: Մարտի 4-ի ԳԽ նախագահության նիստում Արցախի ԻՊՈՒ հրամանատար նշանակվեց գնդապետ Ա. Տեր-Թադևոսյանը: Նույն օրը նախագահությունը որոշեց ԼՂՀ ԳԽ 1992թ. հունվարի 9-ի որոշմանը

---

[1] *Տե՛ս* ***Աբրահամյան Հ.****, նշվ. աշխ., էջ 153-154:*
[2] *Տե՛ս* ***Հակոբյան Տ.,*** *նշվ. աշխ., էջ 42:*

համապատասխան՝ հաստատել ԼՂՀ պաշտպանության խորհրդի (ՊԽ) կազմը[1]:

Այնուհետև ԳԽ նախագահությունը ձեռնամուխ եղավ նաև կառավարության մի շարք պաշտոնների նշանակման, ԼՂՀ ՆԽ կազմը հաստատելու մասին, ԼՂՀ կառավարության անհատական կազմի մասին որոշումների նախագծերի քննարկմանը[2]: «ԼՂՀ ՆԽ-ի մասին» ԼՂՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան, հաստատվեց ԼՂՀ կառավարությունը և անձնարարվեց վերջինիս՝ առաջնորդվելով «ԼՂՀ ՆԽ-ի մասին» ԼՂՀ օրենքով, անցնել իր լիազորությունների կատարմանը:

Այսպիսով՝ ոչ վերջնականապես, բայց ձևավորվեց ԼՂՀ գործադիր իշխանությունը, որը պետք է լուծեր երկրին վերաբերող սոցիալ-տնտեսական և մի շարք այլ հարցեր: Սակայն պետք է նշել, որ, կազմավորելով ԼՂՀ Կառավարությունը, ԼՂՀ ԳԽ նախագահությունը գործադիր իշխանության կարևորագույն լիազորությունները իրեն վերապահեց մինչև 1992թ. օգոստոս (Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը): Դա մեծապես պայմանավորված էր նրանով, որ իրադրությունը ռազմաճակատում դեռևս անչափ լարված էր և հնարավորություն չէր տալիս ԳԽ նախագահությանը ավարտել իշխանական լիազորությունների օպտիմալ բաշխումը, կառավարման համակարգի կենտրոնացումն ու կատարելագործումը:

Ելնելով ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրադրությունից և ղեկավարվելով «ԼՂՀ ՆԽ-ի մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածով՝ հանրապետության անվտանգության և պաշտպանության ապահովման անհետաձգելի միջոցառումների մշակման ու իրագործման շրջանակներում, մինչև ԼՂՀ պաշտպանության նախարարության կազմավորումը, 1992թ. մարտի 26-ին ԼՂՀ ՆԽ-ին առընթեր՝ ստեղծվեց ԼՂՀ պաշտպանության կոմիտե (ՊԿ)[3]:

Հանրապետությունում ներքին կայունություն պահպանելու նպատակով՝ ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը, ներքին պայմանավորվածության համաձայն, որոշեց ՊԿ նախագահ նշանակել Ս. Սարգսյանին, որին հանձնարարվեց 10-օրյա ժամկետում առաջարկություններ ներկայացնել ՊԿ-ի կառուցվածքի, կանոնադրության և անվանակազմի մասին: Կոմիտեն իր ողջ գործունեությունը պետք է կազմակերպեր ԼՂՀ ԳԽ և ՆԽ որոշումների ու կարգադրությունների հիման վրա: Այդ որոշումից հետո ԳԽ նախագահությունը նպատակահարմար գտավ, որ ԼՂՀ ԳԽ նախագահը մի անգամ ևս հանդիպում ունենա ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հետ՝ երկկողմ հարաբերությունների բարելավման նպատակով: Ա. Մկրտչյանը Երևան մեկնեց մարտի 30-ին և հաջորդ օրը հանդիպեց ՀՀ նախագահի հետ: Զրույցի ընթացքում ՀՀ նախագահը Ա. Մկրտչյանին նորից հասկանալ տվեց, որ

---

[1] *Տե՛ս ԱՀ պետարխիվ, Ֆոնդ 254, ցանկ 1, պահպանման միավոր 2, կապ 1, թերթ 5-6:*
[2] *Նույն տեղում, թ. 11-14:*
[3] *Տե՛ս ԱՀ կառավարության ընթացիկ արխիվ, ՆԽ 1992թ. մարտի 26-ի նիստի արձանագրություն, N 3:*

նա իր տեղը պետք է զիջի ՀՀՇ-ական որևէ մեկին՝ հակառակ դեպքում Հայաստանը կարող է դադարեցնել ռազմական օգնության ցուցաբերումը Արցախին[1]:

ԼՂՀ ԳԽ նախագահության և ԻՊՈՒ հրամանատարության ազդեցիկ ղեկավարների մեծամասնությունը դեմ էր նախագահի պաշտոնից Ա. Մկրտչյանի հնարավոր հրաժարվելուն: Մինչդեռ, առանց ՀՀ-ի ամենաբարձր մակարդակով օգնության, հնարավոր չէր պաշտպանել Արցախը: Փաստորեն՝ ԼՂՀ ԳԽ նախագահը կագնած էր երկընտրանքի առաջ: Եվ այդ ժամանակ էլ Արցախում արդեն նշմարվում էր երկիշխանության ուրվականը:

Այս համատեքստում չենք կարող չհիշատակել մի իրադարձություն, որը տեղի ունեցավ Արցախում մինչև Ա. Մկրտչյանի մահը: Արտաքին ուժերի ազդեցության ներքո փորձ կատարվեց մասնատել նորաստեղծ պետականությունը և այդ գործընթացի սկիզբը դրվեց Մարտակերտում: Հարկ է նշել, որ այս իրադարձության վերաբերյալ նշված ժամանակաշրջանի քաղաքական գործիչների շրջանակներում մինչ օրս էլ կան իրարամերժ կարծիքներ, սակայն, երևի այդ իրադարձությունից է դրդված, որ ապրիլի 3-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը դիմում հղեց ԼՂՀ բնակչությանը, որում, մասնավորապես, ասվում էր. «…Հայրենակիցներ, Մենք Ձեզ կոչ ենք անում սթափ և սառնասիրտ գնահատել Արցախի ներկա իրավիճակի ողջ բարդությունը, չենթարկվել խուճապահարույց սադրանքների: Ժամանակի հրամայականն է՝ դիմակայել ցանկացած դավերի: Մեր ինքնապաշտպանական ուժերը հրաշքներ են գործում: Անհավասար կռվում հայրենիքի անձնվեր զավակների թափած արյան գնով թիզ առ թիզ ազատագրվող այս սուրբ հողը չենք զիջի ոչ մեկին: Մեկ անգամ ևս հիշենք. անարգ ու բիրտ ուժին բոլորս միասին դիմագրավենք՝ որպես մեկ հոգի և մեկ մարմին: Պատմության օրենքն է՝ ազատությունը ձեռք է բերվում ուժերի գերազույն լարումով, վերանձնական զոհողությամբ, տքնաջան աշխատանքով և կազմակերպվածությամբ:

Մեր պայքարը խարսխվում է մեր անդառնալի որոշման, անկոտրում կամքի վրա, որոնք կռվաններն են մեր հուսալի ապագայի: Այդ ապագան մեզ է վիճակված կերտելու՝ ի պահ սերունդների»[2]:

Հակված ենք կարծելու, որ Ա. Մկրտչյանի և ԼՂՀ-ում ՀՅԴ-ի գործունեության սխալը պատերազմական իրադրությունում ժողովրդավարական պետություն կառուցելու ուղղությթ ընտրելն էր, ինչի արդյունքում հարկ եղավ իշխանության մի շարք կարևոր պաշտոններ հանձնել ընդդիմադիր կուսակցական գործիչներին: Նման ռազմավարությունը իրեն կարդարացներ, թերևս, արտաքին միջամտության բացակայության դեպքում: Հետագայում կնկատենք, որ Ա. Մկրտչյանի մահից հետո պետության ներսում ստեղծվեց ներքաղաքական քառսային իրավիճակ:

---

[1] *Տե՛ս **Աբրահամյան Հ.**, նշվ. աշխ., էջ 160:*

[2] *ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 1, պ.մ 2, կ.1, թ.36-37:*

Այսպիսի ծայրաստիճան լարված ռազմաքաղաքական իրադրություն էր տիրում հակամարտության գոտում, երբ տեղի ունեցավ ԼՂՀ-ի ներքաղաքական կյանքի ամենաողբերգական իրադարձությունը, որը շրջադարձային կետ հանդիսացավ ԼՂՀ պետական շինարարության գործընթացում. ապրիլի 14-ի երեկոյան զոհվեց ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանը:

Մինչ օրս դժվար է պատասխան տալ այն հարցին, թե արդյո՞ք մտատանջություններն ու հուսահատության ապրումները դարձան կատարված ողբերգության պատճառը: Պատմական փաստն այն է, որ Ա.Մկրտչյանը իրենից հետո թեև ոչ մեծ, բայց թողեց քաղաքական ու բարոյական ժառանգություն. նա ավանդույթներ ստեղծեց, որոնք պահպանվեցին մինչև Գ. Պետրոսյանի հրաժարականը, որը տեղի ունեցավ արդեն պաշտոնական Երևանի հետ ծանր պայքարի պայմաններում: Այսինքն՝ Ղարաբաղը չէր միջամտում ՀՀ ներքաղաքական կյանքին և պահպանում էր իր չեզոքությունը:

Ժանակակիցների վկայությամբ, մինչև նիստի բացումը որոշ քաղաքական ուժերի կողմից տարբեր հասցեներով մեղադրականներ հնչեցին պատահարի առնչությամբ: Ստեղծվել էր պայթյունավտանգ իրավիճակ, երբ ամեն մի անզգույշ քայլ կարող էր ապակայունացնել ներքաղաքական իրադրությունը և հանգեցնել անկախատեսելի հետևանքների: Լիակատար պատրաստականության էին բերվել ԻՊ ուժերում գտնվող ՀՅԴ զինված կազմավորումները, որոնց մեծ մասը կենտրոնացվել էր Ստեփանակերտում: ԼՂՀ ՆԳ նախարարի պաշտոնակատար Ա. Իսագուլովի առաջարկությամբ, մինչև հետաքննության նախնական եզրակացությունը, ԳԽ նախագահության անդամների և Ա. Մկրտչյանի ընտանիքի պահպանությունը ուժեղացնելու նպատակով՝ ներքին կարգով լրահամալրվեց ԳԽ պահակախումբը (մեծամասնությունը՝ ՀՅԴ զինված կազմավորումներից): Միաժամանակ ԳԽ նախագահության անդամներին առաջարկվեց մնալ շենքում: Այդ միջոցառումների իրականացման պատասխանատվությունը դրվեց ԼՂՀ ԳԽ պաշտպանության և անվտանգության մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Բալայանի վրա:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը, ելնելով ստեղծված իրավիճակից և առաջնորդվելով «ԼՂՀ ԳԽ-ի մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածով և 16-րդ հոդվածի 5-րդ կետով, ԼՂՀ ԳԽ նախագահի պարտականությունները դրեց ԼՂՀ ԳԽ նախագահի տեղակալի՝ Գ. Պետրոսյանի վրա[1]:

ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանի ողբերգական մահից հետո ստեղծված ներքաղաքական անկայուն իրադրությունը չսասանեց ԼՂ պետականության հիմքերը, ավելին, ԼՂՀ իշխանությունների վճռականության շնորհիվ ԻՊ ուժերը կարողացան ազատագրել Շուշին և Լաչինը՝ ցամաքային կապ հաստատելով հայկական երկու պետությունների միջև: Դա կարելի է համարել

[1] *Տե՛ս նույն տեղում, թ. 52:*

հայոց ազատագրական պայքարում արցախահայության ամենամեծ ռազմական ու քաղաքական նվաճումներից մեկը և կարևոր գրավական՝ ԼՂ-ի պետականության ամրապնդման համար:

Մայիսյան հաղթանակներից հետո թվում էր, թե ԼՂՀ-ում հանդարտվել են ներքաղաքական հակասությունները, սակայն հունիսի 2-6-ը տեղի ունեցած ԼՂՀ ԳԽ առաջին նստաշրջանը ապացուցեց հակառակը: Նստաշրջանում ԼՂՀ ԳԽ նախագահի ընտրությունների ժամանակ իրենց նորից զգացնել տվեցին ներքին հակասությունները, որոնք ավելի սրվեցին Հայաստանի ղեկավարության ազդեցության հետևանքով: և այն ավելի խորացավ Ադրբեջանի կողմից անսպասելի և շատ կարճ ժամանակամիջոցում Շահումյանի ու Մարտակերտի շրջանի մի մասի բռնազավթումից հետո:

Մեր կարծիքով Շահումյանի ու Մարտակերտի անկումը պետք է բացատրել փոխկապակցված, թերևս, իրար լրացնող մի շարք քաղաքական գործոններով:

Այստեղ լիովին բնականոն հարց է ծագում. ինչպե՞ս պատահեց, որ վերջին պարտություններից հետո բարոյալքված ադրբեջանական բանակը, որն ի վիճակի չէր լայնածավալ ռազմագործողություն վարել, հանկարծ կարողացավ այդքան մեծ հաջողությունների հասնել շատ կարճ ժամանակահատվածում: Չէ՛ որ Ադրբեջանի ներքաղաքական ճգնաժամը չէր կարող նպաստել ադրբեջանական բանակի մարտական ոգու վերելքին: Ընդհակառակը, այդ ճգնաժամը ավելի էր խարխլում նրա մարտունակությունը:

Պետք նշել նաև, որ նման երևույթը կասկածելի է քաղաքական ասպարեզում ու պատմագիտության մեջ. այն մտորումների և ուսումնասիրության տեղիք է տալիս՝ միգուցե աղերսելով հետագայում բացահայտում: Մինչև այսօր փորձեր չեն ձեռնարկվել օբյեկտիվության և առողջ տրամաբանության հիման վրա վերհանել անկման պատճառները: Հաշվի առնելով խնդրի բարդությունն ու խճողվածությունը, ինչպես նաև նրա քաղաքական երկարատև շահարկումները՝ հեղինակները հիմնականում շրջանցել են այն: Սակայն շրջանառության մեջ կան տարբեր տեսակետներ, բայց մի բան ակնհայտ է, որ ԼՂՀ և ՀՀ ուժային համակարգերը տեղյակ էին ադրբեջանական բանակի խոշոր կուտակումների մասին[1]:

Հետագայում կտեսնենք, որ իրադարձությունների զարգացումը և երկրում ստեղծված քաոսային վիճակը անխուսափելի դարձրին մի շարք արմատական փոփոխությունները ԼՂՀ-ի ներքաղաքական կյանքում, որոնք կատարվեցին ՀՀ ղեկավարության պահանջով: Դրանից հետո միայն սկսվեց Արցախյան պատերազմում հայկական կողմի նոր հաջողությունների շրջանը:

Շահումյանի և Մարտակերտի հանձնումը մեծ աղմուկ բարձրացրեց Հայաստանի ներքին կյանքում, լարվեց ներքաղաքական դաշտը: Փոխադարձ մեղադրական կոչեր լսվեցին միմյանց հանդեպ: Շահումյանում տեղակայված Հայաստանի զինված ուժերը մեղադրվեցին դիմադրություն ցույց չտալու և

[1] *Տե՛ս ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 4, պ.մ 2, կ.1, թ.94:*

խուճապ առաջացնելու մեջ: Իսկ հակառակ թևը մեղադրում էր ԼՂՀ ղեկավարությանը[1]:

Ստեղծված ծանր կացությունից դուրս գալու նպատակով ԼՂՀ ԳԽ նախագահությունը փորձեց համապասխան ուղիներ որոնել: Դրությունը շտկելու նպատակով ԼՂՀ իշխանությունները փորձեցին իրագործել գործադիր և ռազմական իշխանությունների կենտրոնացումը ՊԽ-ի ձեռքում, ինչը հնարավորություն կտար դուրս գալ ստեղծված ճգնաժամային կացությունից: Սակայն այդ փորձերը բախվեցին ՀՀ իշխանությունների կողմից ներքաղաքական նկատառումներով հարուցված անհաղթահարելի խոչընդոտներին:

Դրանից ելնելով՝ դեռևս հուլիսի 18-ին ԼՂՀ ԳԽ նախագահության նիստում քննարկվեց ՀՀ-ԼՂՀ փոխհարաբերությունների հարցը: Հաշվի առնելով երկու հայկական հանրապետությունների փոխհարաբերությունների նման վիճակը, ինչպես նաև ելնելով արցախյան հիմնահարցի ըմբռնման գործում պաշտոնական Երևանի դիրքորոշումը պարզելու անհրաժեշտությունից՝ ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշում կայացրեց՝ ՀՀ իշխանությունների հետ բանակցություններ սկսելու նպատակով ՀՀ ուղարկել ԼՂՀ ԳԽ նախագահության պաշտոնական պատվիրակություն՝ հետևյալ կազմով. Գ. Պետրոսյան, Վ. Հակոբյան, Վ. Աղաբալյան, Վ. Ալեքսանյան, Կ. Բաբուրյան, Վ.Ղազարյան, Հ. Խաչատրյան[2]:

Բանակցությունների ընթացքի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ, սակայն, հաշվի առնելով այդ ժամանակաշրջանի որոշ քաղաքական գործիչների վկայությունները[3] և ուսումնասիրելով հուլիսի 27-ի ԼՂՀ ԳԽ նախագահության նիստի սղագրությունը, որտեղ ներկայացված են ՀՀ իշխանությունների հետ բանակցած ԼՂՀ ԳԽ նախագահության պաշտոնական պատվիրակության անդամների կարծիքները, գալիս ենք այն եզրահանգման, որ ՀՀ նախագահը ձգտում էր ձերբազատվել ԼՂՀ ԳԽ նախագահության «անհնազանդ» անդամներից՝ պահանջելով ստեղծել մի ռազմաքաղաքական կամ պետական խորհուրդ և նրան փոխանցել օրենսդիր ու գործադիր մարմինների բոլոր պարտականությունները[4]: Եվ կարելի է կռահել, թե ինչու օգոստոսի 11-ին հանրապետության ՆԽ նախագահ Օ. Եսայանը դիմեց ԳԽ նախագահությանը՝ իր հրաժարականի հարցը քննարկելու խնդրանքով: Նա իր այդ քայլը բացատրում էր իշխանության գոյություն ունեցող կառույցների և ռազմական իրավիճակի պահանջների անհամապատասխանությամբ և առաջարկեց մինչև 1992թ. վերջը հանրապետությունում ռազմական դրություն մտցնել, ինչպես նաև ստեղծել ինչ-որ մարմին և ԼՂՀ ԳԽ-ի ու ՆԽ-ի

---

[1] *Տե՛ս **Ուլուբաբյան Բ.**, Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Եր., 1997, էջ 463:*
[2] *Տե՛ս ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 4, պ.մ 2, կ.1, թ. 22-23:*
[3] *Տե՛ս **Հակոբյան Տ.**, նշվ. աշխ., էջ 123:*
[4] *Տե՛ս ԱՀ ԱԺ ընթացիկ արխիվ, ԼՂՀ առաջին գումարման ԳԽ նախագահության 1992թ. հուլիսի 27-ի նիստի սղագրություն:*

լիազորությունները հանձնել այդ մարմնին[1]: Իսկ հաջորդ օրը՝ օգոստոսի 12-ին նույն՝ հրաժարականների հարցով երկրորդ անգամ ԼՂՀ ԳԽ նախագահությանը դիմեց նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանը և ԼՂՀ ԳԽ քարտուղար Վ. Հակոբյանը, սակայն նախագահությունը դարձյալ որոշեց մերժել վերջիներիս հրաժարականների դիմումը[2]:

Նշված իրադարձության վերաբերյալ կարծիքներ էին տարածվել, թե ԳԽ նախագահի պաշտոնակատարի և քարտուղարի հրաժարականի պատճառը ներքին և արտաքին ճնշումներն են, և այդ քայլը իշխանական համակարգում երկպառակությունը կանխելու նպատակ է հետապնդում:

Այսպիսով՝ հունիսյան ռազմական անհաջողություններից հետո ԼՂՀ-ում ստեղծվեց ծայրաստիճան լարված և անկայուն իրավիճակ՝ սպառնալով երկրի անվտանգությանը: Դրությունը շտկելու նպատակով ԼՂՀ իշխանությունները փորձեցին իրագործել գործադիր և ռազմական իշխանությունների կենտրոնացումը ՊԽ-ի ձեռքում, ինչը հնարավորություն կտար դուրս գալ ստեղծված ճգնաժամային կացությունից: Սակայն այդ փորձերը բախվեցին ՀՀ իշխանությունների կողմից ներքաղաքական նկատառումներով հարուցված անհաղթահարելի խոչընդոտներին: Անհրաժեշտ է նշել նաև, որ այսօր որոշ քաղաքագետներ և պատմաբաններ ԻՊՈՒ-ի ահաջողությունները վերագրում են ԳԽ-ին և ԻՊՈՒ-ի նախկին հրամանատարությանը, որի ռազմաքաղաքական գործունեությունը համարում են կազմակերպչական տեսակետից անարդյունավետ, դրան զումարելով ռուսական օգնությունը Ադրբեջանին, նաև Հայաստանի ոչ ռուսական կողմնորոշումը: Սակայն, պատմական դեպքերը ուսումնասիրելուց և վերլուծելուց հետո կասկածի տակ է առնվում նման տեսակետի տրաբանական լինելը:

1992թ. օգոստոսի 15-ը դարձավ ԼՂՀ-ի պատմության մեջ մի նոր ուղենիշային տարեթիվ. այդ օրը տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ և ՆԽ համատեղ նիստը, որը պետք է վճռեր ՆԽ նախագահի հրաժարականի հարցը և լուծում տար ՀՀ նախագահի՝ մի նոր մարմնի ստեղծման պահանջի հետ կապված մի շարք խնդիրների[3]: Ընդունվեց ԼՂՀ ՆԽ նախագահ Օ. Եսայանի հրաժարականը: Երկրորդ հարցի վերաբերյալ եղան բազմաթիվ իրարամերժ կարծիքներ, և, ի վերջո, ընդդիմադիր կողմերը եկան փոխհամաձայնության: ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշեց ռազմական դրության ռեժիմն իրականացնելու համար «ԼՂՀ պետական անկախության հիմունքների մասին» սահմանադրական օրենքի 9-րդ բաժնի 3-րդ հոդվածին համապատասխան՝ ստեղծել Պաշտպանության պետական կոմիտե (ՊՊԿ)[4]:

ՊՊԿ նախագահ նշանակվեց Ռ. Քոչարյանը, ՊՊԿ նախագահի առաջին տեղակալ՝ ԼՂՀ ՆԽ նախագահի առաջին տեղակալ Բ. Առուշանյանը, ՊՊԿ

---

[1] *Տես՝ **Աբրահամյան Հ.**, նշվ. աշխ., էջ 182:*
[2] *Տես՝ ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 4, պ.մ 2, կ.1, թ. 31-33:*
[3] *Նույն տեղում, թ. 44-47:*
[4] *Տես՝ **Հակոբյան Տ.**, նշվ. աշխ., էջ 127:*

նախագահի տեղակալ՝ ԼՂՀ ԳԽ նախագահության անդամ, պետական շինարարության, իրավական հարցերի և օրինականության ամրապնդման հանձնաժողովի նախագահ Կ. Բաբուրյանը: ՊՊԿ կազմի մեջ ընդգրկվեցին ԼՂՀ ԳԽ նախագահության անդամ, պաշտպանության և անվտանգության հանձնաժողովի նախագահ Վ. Բալայանը, ԼՂՀ ՊԿ նախագահ Ս. Սարգսյանը, ԼՂՀ ՆԳՆ նախարարի պաշտոնակատար Ա. Իսագուլովը, ԻՊՈՒ հրամանատարի առաջին տեղակալ Ս. Բաբայանը:

ՊՊԿ-ին փոխանցվեցին ՆԽ-ի՝ «ԼՂՀ նախարարների խորհրդի մասին» օրենքով նախատեսված բոլոր պարտականությունները, ռազմական դրության ռեժիմի իրականացման այն լիազորությունները, որոնք նախատեսված են «Ռազմական դրության մասին» ԼՂՀ ԳԽ նախագահության 1992 թ. օգոստոսի 13-ի հրամանագրով: ԼՂՀ ԳԽ նախագահության մի շարք լիազորություններ նույնպես փոխանցվեցին ՊՊԿ-ին: ՊՊԿ նախագահն օժտվեց ԼՂՀ ՆԽ նախագահի լիազորություններով: ՊՊԿ նախագահին պարտավորեցվում էր 6 ամիս հետո իր գործունեության հաշվետվությունը ներկայացնել ԳԽ:

ՊՊԿ-ի ստեղծումով սկսվեց արցախյան պետականության գոյապայքարի տարեգրության մի նոր էջ: Անժխտելի է, որ պատերազմական ծանր իրադրությունում կենտրոնացված իշխանական համակարգի, մասնավորապես՝ ռազմաքաղաքական մարմնի նորովի ստեղծումը, ինչպիսին էր ՀՀ իշխանությունների համակրանքը վայելող ՊՊԿ-ն, դարձավ կենսական անհրաժեշտություն և պատմականորեն արդարացվեց: Սակայն, պետաշինարարության հետագա ընթացքի ուսումնասիրությունն ու վերլուծելությունը ակնբախ են դարձնում այդ գործում եղած մի շարք էական թերություններն ու շեղումները, որոնք իրենց բացասական դրոշմն են դրել հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի վրա: Հասկանալի պատճառներով հարկ չենք համարում կանգ առնել այդ թերությունների ու շեղումների վրա…

Պետք է ասել, նաև, որ ՊՊԿ-ի գործունեությունը թելադրվում էր հիմնականում ՀՀ իշխանությունների կողմից, և դա կատարվում էր որպես երկու հայկական հանրապետությունների իշխանությունների գործողությունները ներդաշնակեցնելու անհրաժեշտություն: Իհարկե, այդ անհրաժեշտությունը կար և այն նույնիսկ կենսական պահանջ էր, սակայն այն հանգեցրեց միջազգային դիվանագիտական ասպարեզում ԼՂՀ-ի պետական ինքնուրույնության որոշակի սահմանափակմանը: Հետագայում կնկատենք, որ ԼՂՀ-ն զրկվել էր որևէ ինքնուրույն քաղաքական քայլ կատարելու հնարավորությունից, հետզհետե սեղմվեցին հանրապետության օրենսդիր մարմնի գործունեության շրջանակները, և նրա կարգավիճակը աստիճանաբար դարձավ ձևական: Իսկ Ժողովրդավարական ձևով ստեղծված պետությունը պատերազմական իրադրության թելադրանքով վերածվեց ավտորիտարի: Ցավոք, օգտվելով ժամանակի պարտադրած հանգամանքներից, իշխանական որոշ պաշտոններում հայտնվեցին նաև հասարակության համակրանքը չվայելող անձինք, որոնց գործունեությունը բացասական հետք թողեց և՛

ժողովրդի բարոյահոգեբանության, և՛ երկրի պետական շինարարության որակի վրա:

Որպես հակակշիռ վերը ասվածի, պետք է նշել, որ ՊՊԿ-ն, իր ձեռքը վերցնելով վերոհիշյալ լիազորությունները, շարունակեց և գործունեության առաջին պլան մղեց կառավարման համակարգի յուրովի կենտրոնացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ինչպես նաև ԻՊ ուժերը կազմակերպական-հաստիքային կառուցվածքի անցկացնելու, այսինքն՝ բանակային ենթակառույցների, պաշտպանական շրջանների (ՊՇ) ձևավորման գործընթացը: Իսկ այն սկսվել էր դեռևս ԼՂՀ ՊԿ նախագահի՝ «Պաշտպանական շրջանների և շրջանային լրակազմի ուժերի ու միջոցների կազմակերպական-հաստիքային կառուցվածքի մասին» 1992թ. օգոստոսի 14-ի հրամանագրով[1]: Այդ հրամանագրի հիման վրա ստեղծվեցին 6 ՊՇ-ներ: Իսկ 1993 թ. նոյեմբերին ԻՊՈՒ-ի վերակազմավորման գործընթացը մոտեցավ իր ավարտին, և ԼՂՀ ՊՊԿ նախագահը նոյեմբերի 10-ին հրաման ստորագրեց ԼՂՀ ԻՊՈՒ-ն ԼՂՀ Պաշտպանության բանակի (ՊԲ) վերակազմակերպելու մասին[2]:

Թվում էր, թե մարտական գործողությունների սաստկացման այդ շրջանում ՊՊԿ-ի ստեղծումով կհարթվեն ԼՂՀ օրենսդիր մարմնի և ՀՀ ղեկավարության փոխհարաբերությունները, սակայն բանակցային գործընթացում (1992 թ. օգոստոսի 27-ի Ալմա-Աթայի և Սոչիի սեպտեմբերի 19-ի համաձայնագրերը) առաջ եկած տարաձայնությունները վատթարացրին երկկողմ հարաբերությունները: Իսկ այդ տարաձայնությունների հիմնական պատճառներից մեկն այն էր, որ ԼՂ-ի շուրջ բանակցային գործընթացը տարվում էր առանց ԼՂՀ-ի մասնակցության: Բանակցային գործընթացում ԼՂՀ օրենսդիր մարմնի և ՀՀ նախագահի միջև առաջացած տարաձայնությունները նոր խթան հանդիսացան լարվածության ուժեղացման համար: Այնուամենայնիվ, ԼՂՀ ԳԽ նախագահությունը շարունակում էր ՀՀ իշխանությունների հետ հարաբերությունները բարելավելու համար ուղիներ որոնել, սակայն այդ որոնումներն ապարդյուն անցան:

Կարելի է ասել, որ բանակցային գործընթացում ՀՀ նախագահը նորից չէր վստահում ԼՂՀ օրենսդիր իշխանությանը: Ուստի հակառակ թևը սկզբնական շրջանում փորձեց ուղիներ որոնել և բարելավել հարաբերությունները ՀՀ իշխանությունների հետ: Այդ առնչությամբ 1992թ. հոկտեմբերի 13-ին ԼՂՀ ԳԽ նախագահության պաշտոնական պատվիրակությունը՝ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանի գլխավորությամբ այցելեց Երևան և հանդիպումներ ունեցավ ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի հետ: Այդ հանդիպումների նպատակն էր պարզել՝ արդյո՞ք փոփոխություններ տեղի չեն

---

[1] *Տե՛ս **Հարությունյան Մ**., Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994թթ., պատմական գիտությունների թեկնածուական ատենախոսություն, Եր., 2001, էջ 86 (ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարան):*

[2] *Տե՛ս ԱՀ կառավարության ընթացիկ արխիվ, ՊՊԿ-ի նախագահի 1993թ. նոյեմբերի10-ի որոշում N 323:*

ունեցել ԼՂՀ հանդեպ վարած ՀՀ քաղաքականության մեջ, մանավանդ ինչպես նշեցինք, երբ ԼՂՀ վերաբերյալ վերջին երկու համաձայնագրերը կայացվել էին առանց ԼՂՀ ներկայացուցիչների մասնակցության[1]: Սակայն կարելի է եզրակացնել, որ բանակցություններն անցել են անարդյունք: Պատճառը երևի պարզ է. ՀՀ-ում Արցախյան հիմնախդիրը պետք է շահարկվեր ներքին կայունությունը պահպանելու համար:

Երկու հայկական հանրապետությունների բարձրագույն իշխանությունների հարաբերությունների լարվածությունը ԼՂՀ-ում ծնունդ տվեց բացահայտ ներքա¬ղաքական առճակատումների, որոնք հանգեցրին ՊՊԿ-ի կողմից ԳԽ նախագահության անդամների, ԳԽ պատգամավորների և ԳԽ աշխատակազմի որոշ անդամների վրա ճնշումների գործադրման[2]: Վերլուծելով ստեղծված իրավիճակը, կարելի է գալ այն եզրահանգման, որ ՀՀ ղեկավարությունը ՊՊԿ-ի լծակներով փորձում էր նորից պատժել ԼՂՀ ԳԽ նախագահության «ահնազանդ» անդամներին:

Այդ առնչությամբ նոյեմբերի 24-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին հղեց հետևյալ նամակը. «Մեծարգո նախագահ. ՀՀ-ի և ԼՂՀ-ի միջև ժամանակի ընթացքում Երևանում սկսված բնական երկխոսությունների օգտակարությունը հուշում է գործընթացի շարունակման անհրաժեշտությունը: Վիճակի օրավուր սրման պայմաններում, պատիվ ունենք, մեծարգո նախագահ, հրավիրելու Ձեզ ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտ՝ արժեքավորելու և կոնկրետացնելու շահավետ երկխոսությունը: Համաձայնություն տալու դեպքում, խնդրում ենք մեզ տեղյակ պահել Արցախ գալու Ձեզ համար նպատակահարմար ժամանակի մասին:

Ընդունեք, պարոն նախագահ, Ձեր նկատմամբ տածած հարգանքների հավաստիացումը»[3]:

Պետք է նշել, որ այդպես էլ ՀՀ նախագահը չցանկացավ հանդիպել ԼՂՀ ԳԽ նախագահության անդամների հետ: Նման պայմաններում ԼՂՀ ԳԽ նախագահությունը գաղտնի նամակ հղեց ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին[4]:

Նամակի բովանդակության վերաբերյալ նշված ժամանակաշրջանի քաղաքական գործիչների շրջանակներում մինչ օրս էլ կան իրարամերժ կարծիքներ, սակայն, ուսումնասիրելով դրանք, կարելի է եզրակացնել, որ նամակում ԼՂՀ ԳԽ նախագահությունը բանակցային գործընթացի վերաբերյալ արտահայտել է իր տեսակետներն ու առաջարկությունները:

1993թ. փետրվարի սկզբներին Արցախի իշխանությունների միջև գոյություն ունեցող հակասությունները թևակոխեցին մի նոր շրջան: Փետրվարի 10-ին, Ադրբեջանի կողմից ուղղակի ԼՂՀ տարածքի բռնազավթման կապակցությամբ ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը որոշում կայացրեց 3 ամսով, մինչև 1993թ.

---

[1] *Տե՛ս «Երկիր», 30.10.1992:*
[2] *Տե՛ս* ***Հակոբյան Տ.,*** *նշվ. աշխ., էջ 140:*
[3] *Տե՛ս ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 4, պ.մ 6, կ.1, թ. 22:*
[4] *Տե՛ս* ***Հակոբյան Տ.****, նշվ. աշխ., էջ 147:*

մայիսի 12-ը երկարաձգել 1992թ. օգոստոսի 12-ի ԼՂՀ ԳԽ-ի նախագահության հրամանագրով ԼՂՀ ողջ տարածքում ռազմական դրության ժամկետը[1]: Նույն որոշմամբ, ռազմական դրության հայտարարման կապակցությամբ ստեղծված ՊՊԿ-ն պետք է փետրվարի 18-ին ԼՂՀ ԳԽ-ի նախագահությանը ներկայացներ հաշվետվություն՝ անցած 6 ամսվա ընթացքում կատարած աշխատանքի վերաբերյալ: Ինչպես նաև առաջիկա այդ 2 օրերին ՊՊԿ-ն պետք է ԼՂՀ ԳԽ-ի նախագահությանը հանձներ իր ընդունած որոշումները, կարգադրություններն ու այլ փաստաթղթեր: Փետրվարի 12-18-ը փորձագետները պետք է ճշտեին դրանց օրինականությունը:

Փետրվարի 14-ին ԼՂՀ ԳԽ-ի մանդատային, մարդու իրավունքների, պարկեշտության և ազգությունների մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ հրավիրվեց ԼՂՀ ԳԽ-ի պատգամավորների խորհրդակցություն: Հանդիպան ժամանակ, որին մասնակցել են նաև ԼՂՀ ՊՊԿ-ի և ԻՊՈՒ-ի ղեկավարությունը, առաջարկվեց քննարկել ՊՊԿ-ի լիազորությունների լրանալու և ռազմական դրության ժամկետի երկարաձգման հետ առնչվող հարցեր: ՊՊԿ-ին մոտ շրջանակների ներկայացուցիչները ռազմական դրությունը մինչև պատերազմի ավարտը երկարաձգելու և[2] ՊՊԿ-ին լրացուցիչ լիազորություններ տրամադրելու պահանջներ ներկայացրեցին:

Նման իրավիճակի պայմաններում ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը փետրվարի 17-ին նամակ հղեց ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանին[3]: Նամակում հաղորդվում էր ՀՀ տնտեսական և քաղաքական իրավիճակի պատճառների, ՀՀ նախագահի և ԼՂՀ օրենսդիր մարմնի փոխհարաբերությունների, ինչպես նաև բանակցային գործընթացում ԼՂՀ դիրքորոշումների անտեսման մասին:

ԼՂՀ ԳԽ-ի նախագահության և ՊՊԿ-ի միջև քաղաքական հակամարտությունը փետրվարի 18-ին մտավ իր վերջին փուլը: ՊՊԿ-ի նախագահ Ռ.Քոչարյանը չներկայացավ ԼՂՀ ԳԽ-ի նախագահության ընդլայնված նիստին, ուր պետք է լսվեր ՊՊԿ-ի 6 ամսյա գործունեության հաշվետվությունը: Նիստին մասնակցող ՊՊԿ-ին մոտ կանգնած շրջանակները միաժամանակ արշավ ծավալեցին՝ պահանջելով առանց ՊՊԿ-ի հաշվետվությունը լսելու վերանայել ռազմական դրությունը 3 ամսով երկարաձգելու որոշումը: Նրանք այն կարծիքին էին, որ ռազմական դրությունը պետք է հայտարարվի մինչև պատերազմի վերջը:

Նիստում նաև առաջարկվեց ստեղծել փոքր խորհրդարան կամ ընդլայնված նախագահություն՝ նրա կազմում ընդգրկելով ոչ պատգամավորների: Բացահայտելով նման որոշումների կործանարար էությունը երիտասարդ հանրապետության համար՝ ԳԽ-ի նախագահությունը մերժեց ընդունել

---

[1] *Տե՛ս ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 4, պ.մ 7, կ.1, թ. 52-53:*
[2] *Տե՛ս «Երկիր», 17.02.1993:*
[3] *Տե՛ս «Երկիր», 23.02.1993:*

որոշումներ, որոնք կարող են հանգեցնել «բռնատիրության» հաստատմանը: Ի վերջո, երկար քննարկումներից և բանավեճերից հետո գործադիր իշխանությունների ներկայացուցիչները ստիպված էին համաձայնել ողջամիտ միակ տարբերակի հետ՝ հրավիրել նստաշրջան, որը պետք է լսեր ՊՊԿ-ի և ԳԽ-ի նախագահության զեկուցումները և որոշ փոփոխությունների ընդգրկումը ԳԽ-կանոնակարգի մեջ: Այն ակնկալվում էր հրավիրել առաջիկա 1 ամսվա ընթացքում, նստաշրջանի հարցերից մեկն էլ պետք լիներ նաև ԼՂՀ ԳԽ-ի ղեկավարության թափուր պաշտոնների համար ընտրությունները:

Այս իրադարձությունների կապակցությամբ ՀՀ ԳԽ-ի մի խումբ պատգամավորներ հրապարակեցին հայտարարություն, որով արտահայտեցին իրենց մտահոգությունը ցավալի միջադեպի առթիվ՝ կատարվածը համարելով Հայաստանի ղեկավարության կոպիտ միջամտության արդյունք, պահանջել վերջ տալ ժողովրդավարական եղանակով ստեղծված մարմնի հեղինակության հետ կատարվող խաղին, միասնական ու համերաշխ գործողություն ծավալել ԼՂՀ օրինական պետական մարմնի հովանու ներքո[1]:

Ինչպես տեսնում ենք, ներքաղաքական իրադրության սրումը հետևանք է այն հանգամանքի, որ օրենսդիր և գործադիր մարմինները, որոնք առաջին հայացքից, թվում է, յուրովի իրավացի են գործում, չունեին համատեղ և ներդաշնակ գործունեության մշակված ծրագիր, ինչի պատճառով նրանց կողմից մեկը մյուսին ներկայացվող մեղադրանքները, փաստորեն, վերաբերում էին երկուսին էլ: Պարզ է, որ ժողովրդի կողմից օրինական կերպով ընտրված օրենսդիր մարմնի և պատերազմական շրջանի թելադրանքով ստեղծված գործադիր մարմնի միջև համերաշխության առկայության, երկուստեք քաղաքական պատվախնդրությունների բացակայության դեպքում նրանց երկուսի ջանքերը լիովին կնպատակամղվեին ընդհանուր շահին՝ ադրբեջանական ագրեսիայի դեմ հաղթանակի հասնելու գործին, այլ ոչ թե ներքին հակասությունների հաղթահարմանը կամ մեկը մյուսի նկատմամբ գերակայության հասնելուն: Չի կարելի ժխտել, որ ՊՊԿ-ն, որպես պատերազմական շրջանի ռազմաքաղաքական մարմին, պարտավոր էր հանրապետության գերագույն ղեկավար մարմնի առաջ իր պատասխանատվության և իրավունքների շրջանակներում լուծել ոչ միայն ռազմական խնդիրները, այլև դրանցից բխող, դրանցով պայմանավորված և դրանց հետ առնչվող՝ ներքին կյանքի հարցերը: Հենց այդ շրջանակներից դուրս գալը, ԼՂՀ ԳԽ-ի ու նրա նախագահության գործունեությունը սահմանափակելու ձգտումը, ինչը պարզորոշ կերպով նկատելի է ստեղծված իրադրության ֆոնի վրա, հանդիսացել է ներքաղաքական կյանքի լարվածության գլխավոր պատճառը:

Մարտի 21-ին իր աշխատանքը վերսկսեց ԼՂՀ առաջին գումարման ԳԽ-ի առաջին նստաշրջանը: Օրակարգում էին հետևյալ հարցերը՝ ԼՂՀ ՊՊԿ-ի

[1] *Տե՛ս «Երկիր», 19.02.1993:*

հաշվետվությունը, ԼՂՀ ամբողջ տարածքում ռազմական դրության ժամկետի մասին, ԼՂՀ ԳԽ-ի ժամանակավոր կանոնակարգում և ԼՂՀ ԳԽ-ի մասին օրենքում փոփոխություններ մտցնելը, ԼՂՀ ԳԽ-ի նախագահի և նախագահի տեղակալի ընտրությունները, ԼՂՀ ԳԽ-ի նախագահության հրամանագրերի և օրենսդրական ակտերի ուղղությամբ որոշումների հաստատումը:

ՊՊԿ-ի հաշվետվությունը ներկայացրեց ՊՊԿ նախագահ Ռ.Քոչարյանը[1]: ԼՂՀ ԳԽ-ի նախագահության հաշվետվությամբ հանդես եկավ ԼՂՀ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանը[2]: Նա անդրադարձավ պետականության ձևավորման խնդիրներին, ինչպես նաև նշեց օրենսդիր և գործադիր մարմինների միջև առկա տարաձայնությունների առարկայական և ենթաառարկայական պատճառները[3]:

ԼՂՀ ԳԽ նախագահի թեկնածուներին ոչ մեկին չհաջողվեց հավաքել ձայների անհրաժեշտ քանակություն: ԳԽ-ի նստաշրջանը որոշեց Գ.Պետրոսյանին թողնել ԼՂՀ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար մինչև ապրիլի վերջը, այնուհետև կրկին անդրադառնալ այդ հարցին: Սակայն ապրիլի վերջին քվորում չլինելու պատճառով այն չկայացավ, որոշում կայացվեց նիստը անցկացնել ԳԽ-ի կրկնական և նոր ընտրությունների անցկացումից հետո:

Այսպիսով՝ ԼՂՀ իշխանական համակարգում կատարված ակնհայտորեն ստիպողական փոփոխությունները չվերացրին պաշտոնական Երևանի և Ստեփանակերտի միջև եղած հակասությունները: Խաղաղարար բանակցային գործընթացում ծագած նոր տարաձայնությունները և որոշ ներքին գործոններ ավելի սրեցին դրանք, ինչը բացասական ազդեցություն ունեցավ ԼՂՀ-ի ներքաղաքական կայունության վրա՝ սպառնալիք ստեղծելով երկրի անվտանգությանը: Հենց այդ հանգամանքից օգտվելով՝ ՀՀ նախագահը սաստկացրեց ճնշումը ԼՂՀ օրենսդիր մարմնի վրա, որի արդյունքում հրաժարական տվեց ԼՂՀ ԳԽ պաշտոնակատար Գ.Պետրոսյանը, իսկ ԳԽ նախագահի պարտականությունները դրվեց Կ.Բաբուրյանի վրա:

Թվում էր, թե ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանի հրաժարականով պետք է հանդարտվեր ներքաղաքական լարվածությունը հանրապետությունում, սակայն 1994թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների ընթացքը ցույց տվեց հակառակը: Իսկ դա վառ կերպով դրսևորվեց դեկտեմբերի 21-23-ին տեղի ունեցած ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանում, որի աշխատանքը անհրաժեշտ ենք համարում մասնակի լուսաբանել, քանզի այդ նստաշրջանը նաև ուղենիշային և բախտորոշ դեր խաղաց ԼՂՀ-ի քաղաքական կյանքում:

Մինչդեռ 1994թ նոյեմբերի 9-ի ԼՂՀ ԳԽ նախագահության նիստի ժամանակ որոշում կայացվեց նստաշրջանը հրավիրել 1994թ. նոյեմբերի 23-ին[4]:

---

[1] *Տե՛ս ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 4, պ.մ 2, կ.1, թ. 41-50:*
[2] *Նույն տեղում, թ. 59-65:*
[3] *Տե՛ս «Երկիր», 23.02.1993:*
[4] *Տե՛ս ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 2, պ.մ 23, կ.3, թ. 9:*

Օրակարգում ներկայացվեցին մի շարք հարցեր, այդ թվում՝ ԼՂՀ ռազմական դրության ժամկետը երկարաձգելու և ԼՂՀ կառավարման համակարգի կատարելագործման մասին: Սակայն անհայտ պատճառներով նստաշրջանը տեղի չունեցավ:

Այն կայացավ դեկտեմբերի 21-ին: Ցանկանում ենք նշել նաև, որ նստաշրջանը սկսվեց առանց օրակարգի[1], և այն ձևավորվեց նստաշրջանի ընթացքում:

Ուսումնասիրելով դեկտեմբերի 21-23-ին տեղի ունեցած ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանի սղագրությունը, ինչպես նաև մասնակի պահպանված տեսաձայնագրությունը[*]՝ պարզ է դառնում, որ ՀՀ իշխանությունների համակրանքը վայելող քաղաքական գործիչների և ԼՂՀ ՊԲ հրամանատարության՝ մասնավորապես ՊԲ հրամանատար Ս.Բաբայանի կողմից ճնշումներ գործադրվեցին ԼՂՀ ԳԽ որոշ պատգամավորների վրա: ԼՂՀ ԳԽ նախագահությունը մեղադրվեց անգործության մեջ: Հնչեցին հայտարարություններ ԼՂՀ կառավարման համակարգում փոփոխություններ մտցնելու անհրաժեշտության մասին, նաև ՊՊԿ նախագահ Ռ.Քոչարյանին նախագահ չընտրվելու դեպքում անգամ 10 օրվա ընթացքում ԳԽ-ն ընդհանրապես ցրելու և նոր ընտրություններ անցկացնելու մասին[2]:

1994թ. դեկտեմբերի 21-ին ԳԽ-ի նիստում որոշում կայացվեց ԼՂՀ-ում հիմնել նախագահական կառավարման ինստիտուտ, ընդունվեց «ԼՂՀ Նախագահի մասին» օրենքը, ըստ որի հանրապետության նախագահը պիտի ընտրվեր 5 տարի ժամկետով՝ ուղղակի փակ գաղտնի ընտրությամբ: Սակայն, հաշվի առնելով ռազմական դրության պահանջները, ԳԽ որոշեց ԼՂՀ առաջին նախագահին ընտրել երկու տարի ժամկետով՝ փակ գաղտնի քվեարկությամբ[3]:

Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 22-ին, ընդունվեցին «ԼՂՀ Խորհրդանի մասին»[4], «ԼՂՀ կառավարության մասին» օրենքները[5]: Այնուհետև խորհրդարանն անցավ հաջորդ հարցին՝ ԼՂՀ նախագահի ընտրություններին: Առաջադրվեցին 2 թեկնածու՝ ՊՊԿ նախագահ Ռ.Քոչարյանը և ԼՂՀ ԳԽ պատգամավոր Մ. Պետրոսյանը, ով, սակայն, հանեց իր թեկնածությունը: «ԼՂՀ Նախագահի մասին» ԼՂՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն փակ գաղտնի քվեարկությամբ (51 կողմ, 2 դեմ) ԼՂՀ նախագահ ընտրվեց Ռ.Քոչարյանը[6]

Դեկտեմբերի 23-ի առավոտյան նիստում տեղի ունեցավ ԼՂՀ նախագահի երդման հանդիսավոր արարողությունը, այնուհետև, շարունակելով նիստը, ընդունվեց «ԼՂՀ Խորհրդարանի ընտրությունների մասին» օրենքը[7]:

---

[1] *Տե՛ս ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 2, պ.մ 25, կ.3, թ. 90:*

[*] *Թեմայի ուսումնասիրության ընթացքում ծագել են որոշակի դժվարություններ, ցավոք, ԱՀ պետական և ԱԺ ընթացիք արխիվներում ԼՂՀ առաջին գումարման ԳԽ նախագահության նիստերի սղագրություններից մբացակայում են մի շարք ռազմական և քաղաքական գործիչների աղմկահարույց ելույթներ, ինչպես նաև պետական շինարարությանը վերաբերող որոշ կարևոր արխիվային նյութեր: Ուստի առաջադրված խնդիրները պարզաբանելու համար անհրաժեշտ է եղել օգտագործել անձնական արխիվներ:*

[2] *Տե՛ս Հեղինակի անձնական արխիվ, ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանի 1994թ. դեկտեմբերի 21-23 նիստի տեսաձայնագրություն:*

[3] *Տե՛ս ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 2, պ.մ 25, կ.3, Ã. 52:*

[4] *Նույն տեղում, թ. 90-137:*

[5] *Նույն տեղում, թ.138-146:*

[6] *Նույն տեղում, թ.150:*

[7] *Նույն տեղում, թ.154-187:*

Այսպիսով՝ պաշտոնական Երևանի միջամտության արդյունքում ԼՂՀ կառավարման համակարգում կատարվեցին ստիպողական փոփոխություններ, որոնց հետևանքով երկիրը խորհրդարանական հանրապետությունից անցում կատարեց նախագահականի: Ներքաղաքական կայունության ապահովման գործում մեծ դեր խաղաց օրենսդիր մարմնի դրսևորած քաղաքական կամքը և պատասխանատվության զգացումը նորաստեղծ պետականության ու երկրի ժողովրդի ապագայի հանդեպ:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ., Վ.Ռ.Բալայանը: